

2. Գ. Բաժինջադյան

ՄԻՇՏ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՇԵՏ

Նախասովետական տարիներին հայ մշակույթի առանձին գործիչներ, իհարկե, ուսումնասիրում էին Սայաթ-Նովայի ստեղծագործությունը, սակայն մեծ երգչի թողած բանաստեղծական ժառանգության հավաքման, պահպանման և հետազոտության նկատմամբ պետական հոգատարություն չկար: Նրա անգուգական պոեզիայի ուսումնասիրումը հանգում էր առանձին անձանց միմյանցից անջատ ջանքերին և այդ գործը դիտվում էր իբրև նրանց անձնական գործ, իբրև նրանց սուբյեկտիվ ձգտումների, նրանց գրական ճաշակի դրսևորում:

Սայաթ-Նովայի ստեղծագործության համաժողովրդական նշանակությունը և նրա գրական ժառանգությունը ուսումնասիրելու և պրոպագանդելու հասարակական արժեքը լայն շրջանների կողմից այն ժամանակ դեռևս չէր գիտակցված: Ավելին. նոր սերնդին Սայաթ-Նովայի անունը քիչ բան էր ասում, քանի որ նրա երգերի ժողովածուն հրապարակի վրա չկար: Նախասովետական տարիներին վրացերեն և ադրբեջաներեն գրած նրա երգերը չէին հրատարակվել, իսկ հայերեն երգերի ժողովածուն լույս էր տեսել միայն մեկ անգամ՝ 1852 թ. Կեդրգ Ախվերդյանի եռանդուն ջանքերի շնորհիվ և արագորեն տարածվելով դարձել էր բիրլիոդրաֆիական հազվագյուտ նմուշ: Ահա թե ինչու Սայաթ-Նովայի ոչ միայն վրացերեն ու ադրբեջաներեն, այլև հայերեն երգերը միայն բեյ-բեքան էին հաղորդվում: Դա, նախ հանգեցնում էր անխուսափելի աղավաղումների, ապա և աստիճանաբար մոռացվում էր այն մարդու անունը, որը հայ ժողովրդի ազգային հպարտությունն էր և բոստ էության Անդրկովկասի բոլոր ժողովուրդներինը լինելով, իր տաղանդի շնորհիվ համաշխարհային պոեզիայի մեջ կարող էր գրավել առաջնակարգ տեղերից մեկը:

Այդ վիճակը այլոց թվում շարունակ անհանդստացնում էր նաև նկարիչ Բաշինջադյանին՝ Սայաթ-Նովայի ջերմ երկրպագուին ու գիտակից: Հանճարեղ երգչի վեհ պոեզիան հայկական ազգային բնականորեն ստեղծողի հումանիստ հոգուն համահնչյուն էր, իսկ բանաստեղծի ողբերգական ճակատագիրը խորապես հուզում էր նրան: Ախվերդյանական ժողովածուն նրա սեղանի գիրքն էր: Սայաթ-Նովայի երգերը նա ամբողջ գիտեր: Ախվերդյանի պես նա էլ չէր կարող բավարարվել, մեծ մարդուն հարողդի, նրա ետմահու թախծալի ճակատագրի տրտում դիտորդի դերով: Եվ ահա «Մշակի» 1912 թ. նոյեմբերի 11-ի (№ 252) համարում հրապարակվում է Գ. Բաշինջադյանի հուզիչ նամակը՝ «Սայաթ-Նովա: Կոչ հայ ժողովրդին» խորագրով: Ահա այն.

«Մի մեծ և հին պարտք կա հայ ժողովրդի վրա, որը մոռացության է տրված և որը սակայն երբեք չի մոռացվիլու: Ո՞վ չէ լսել ամենման ժողովրդական բանաստեղծ Սայաթ-Նովայի անունը, ո՞վ չէ հիացել ու զմայլվել նրա հանճարեղ երգերից և ո՞վ կարող է ուրանալ նրա հսկայական ծառայությունը հայ ժողովրդական լիրիկ բանաստեղծության մեջ:

Աշուղներ, երգիչներ շատ են եղել, ինչպես Շիրին, Սեյադ, Քիչիկ-Նովա, Միսկին-Բուրջի, Շամշի-Մելքոն, Թուրինջ, Ազրար-Ադամ, Գյուրջի-Օղլան, Նարգիզ, Հաղաթ-Օղլան, Գյուրջի-Նավե, Ջիվան և այլն, և այլն: Դեռ այսօր էլ կան Սկանդար-Նովայի և Հազիրի նման երգիչներ, որոնք ունեն իրենց երկրպագուները ժողովրդի մեջ, սակայն Սալաթ-Նովան նրանց մեջ այնպիսի մի աժդահա է, որի սովերի մեջ բոլորեքյան գունատվում են:

Բայց այս անզուգական պոետը մոռացված է, մոռացված է այն մտքով, որ նրա ոչ մահվան հարյուրամյակն է հարգված, ոչ երբևիցե նրա հոգեհանգիստն է կատարված, և ոչ (ամոթ է խոստովանել) նրա գերեզմանի վրա որևէ նշան դրված:

Ինչո՞ւ է այդպես: Միթե՞ Սալաթ-Նովան այնչափ ծառայություն չէ արած իր ազգին, որքան այն բարերարի տիտղոս ստացած հանգուցյալները, որոնք լոկ դրամի շնորհիվ առնվաղն տարենը մի անգամ երախտագնտ բազմություն են հավաքում իրենց գերեզմանի վրա:

Եթե մենք այն աստիճան պարտաճանաչ ենք, որ բարերարների ծառայությունը հարգում ենք, և այն բարերարների, որոնք դումարներ են կտակել ազգին, բացառապես իրենց մահից հետո, այսինքն, երբ իրենց այլևս ոչ մի կոպեկ հարկավոր չէ, ինչո՞ւ Սալաթ-Նովայի նման բանաստեղծական գանձ ընծայողը, այդ ժողովրդական գրականության փառքն ու պարծանքը անուշադրության մատնված պետք է լինի:

Ահա այստեղ կարելի է չափել մեր կուլտուրական զարգացումը:

Եկեք մաքրենք մեր մեղքերը, նամանավանդ որ շատ հեշտ է այդ: Եկեք մի մահարձան, թեկուզ մի տապանաքար դնենք նրա գերեզմանի վրա: Հոգ չէ, թող այդ քարը լինի պարզ, էժանագին, միայն թե լինի այդ իրագործված ժողովրդի կոպեկներով:

Հավատացած եմ, որ այս կոչը կարտատպե ամեն մի հայ թերթ և ուրախությամբ կընդունի յուրաքանչյուրի լուման, որքան էլ աննշան լինի նա իր քանակությամբ:

Հավատացած եմ նույնպես, որ Սկանդար-Նովա ու Հազիր երգիչները հրապարակ կգան ու օրինակ կտան ժողովրդին ընծայելով իրենց սուղ միջոցներից մի քանի կոպեկ: Նրանց կհետևի ժողովրդի այն մասը, որի համար ազգային պարծանք է Սալաթ-Նովան:

Թող ամեն մի անհատ նվիրե այս նպատակի համար 5, 10 կոպեկ, թող ոչ ոք չքաշվի փոքրիկ գումար տալով: Սև կոպեկներով կանգնեցված մահարձանը մեծ մարդու գերեզմանի վրա մեծ է լինելու:

Այս նշանավոր աշուղը ծերունիների վկայությամբ թաղված է Թիֆլիսի Կաթողիկե ս. Աստվածածնի (ս. Գևորգ) եկեղեցու գիսավոր մուտքի աջ կողմը, պատի տակ: Նա նահատակվեց այնտեղ պարսիկների ձեռքով, երբ Աղա-Մահմեդ-խանը ավերեց Թիֆլիսը¹:

Բաշինջաղյանի այս կոչն արտատպվեց մյուս թերթերում և ամսագրերում ու լայն արձագանք գտավ: Առաջիններից մեկը նրան աբձագանքեց և ջերմորեն պաշտպանեց Հովհաննես Թումանյանը: «Սալաթ-Նովայի շիրիմը» վերնագրով հոդվածում «մեր սիրելի նկարիչի» բարձրացրած խնդրի առթիվ նա գրում

¹ Մշակ, 1912 թ. նոյեմբերի 11, № 252:

է. «Հիւրավի ծանր է, երբ միտք եւ անում, էսքան հոյակապ մի տաղանդ, էսքան խորունկ մի հոգի, էսքան ազնիւ ու կենդանի մի սիրտ ու էսքան մոռաց լած մի դերեղման...»։ Դրա պատճառը, բացատրում է Թումանյանն, այն է, որ հայ ազգը «ջախջախւած, խանգարւած ու խառնւած մի խալիս է դարձել ու դեռ ուշքի չի եկել»։ «Արժե, — շարունակում է նա, — որ հայ ժողովուրդը երբեմն-երբեմն էս հարազատ, գեղեցիկ ու մեծ անունները հանդես բերի ու ջերմանան նրանց մշտավառ հոգիների անշեջ կրակով»։ Թումանյանն իր հողվածում հայտնում է, որ հայոց նորարաց Գրական ընկերութիւնը հատուկ Սայաթ-Նովային նվիրւած գրական-երաժշտական երեկո կկազմակերպի և «շիրիմի խնդիրն էլ էս անգամ կարգի կդրվի»²։

Թումանյանի և Բաշինջաղյանի ջերմ կոչը շարժման մեջ դրեց ոչ միայն Թիֆլիսի, այլև մյուս քաղաքների առաջավոր հայ հասարակութիւնը, դեմոկրատական մտավորականութիւնը, հայ աշուղներին, որոնք ամենուր երգում էին Սայաթ-Նովային։ Շուտով սկսվեց «երգասացների արքայի» հուշարձանի համար նվիրատւութիւնների ստացումը։ Հայ գրողների ընկերութիւնը կից ստեղծվեց Սայաթ-Նովայի հիշատակը հալեթացնող և հուշարձանը հիմնադրող հանձնախումբ, որի անդամն էր նաև Գ. Բաշինջաղյանը և որին հանձնարարվեց հուշարձանի էսքիզային նախագիծ կազմել։ Մահարձանի կառուցման ֆոնդն էն մոծովում կազմակերպվող համերգներից ու Սայաթ-Նովային նվիրւած երեկոներից առաջացող միջոցները։ Շուտով Գ. Բաշինջաղյանի ներկայացրած նախագծի հիման վրա հայտնի իտալացի քանդակագործներ Վիլլան և Ռիցցլին սկսում են կերտել հուշարձանը։ Այդ աշխատանքներին մշտապես հսկե ու հետ միաժամանակ նկարիչը հաճախակի հանդես էր գալիս մամուլում, հիշեցնում Սայաթ-Նովայի և նրա գրական ժառանգութիւն մասին։

Ուշագրավ է այն, որ Սայաթ-Նովայի հուշարձանի կերտումն, ի պատիւ այդ մեծ գործի նախաձեռնողների ու կազմակերպողների, հենց ի սկզբանե համաժողովրդական բնույթ էր կրում։ Նրանք դիմում էին ոչ թե բուրժուազիային, ոչ թե ունեւոր խավերին, այլ, ընդհակառակը, աշխատավոր ժողովրդին, լայն մասսաներին։ Դա բնական էր. մեծ երգչի հիշատակը նրանց համար, իրոք, շատ թանկ էր և միայն նրանք կարող էին ըստ արժանւոյն դնահատել նրա մեծութիւնը։ Այդ շարժման դեմոկրատական բնույթի վառ արտահայտութիւնն էր մեկն այն համերգներից, որի ծրագիրը կազմված էր Սայաթ-Նովայի երգերից

2 «Հորիզոն», 1912 թ. նոյեմբերի 23, № 259։

Մեր մեծ գրողի այս հողվածն իր տեղն է գտել Թումանյանական ժողովածուներում, այդ թվում նաև Գոսլիտիզդատի 1960 թ. հրատարակած Թումանյանի երկերի երկրորդ հատորում (Թարգմ. Աննա Հովհաննիսյանի, էջ 228)։ Սակայն ինչ-ինչ պատճառներով տեքստում բաց են թողնված հողվածի առաջին երկու պարբերութիւնները, որոնք հետևյալն են. «Մեր սիրելի նկարիչ Գ. Բաշինջաղյանը անցյալները «Մշակում» մի նամակ էր տպել ու հիշեցրել էր մեր անմահ երգիչ Սայաթ-Նովայի շիրիմի խնդիրը»։

Եթե չեմ սխալւում մի անգամ էլ մի քանի տարի առաջ մեր ազգայիններից միին (հայտնի չէ թե ում նկատի ունի Թումանյանը. — Զ. Բ.) հրապարակ հանեց դարձյալ Սայաթ-Նովայի շիրիմի խնդիրը, բայց ևնպես անպատասխան էլ անցավ ու մոռացվեց, թե հարուցած խնդիրը, թե ինքը հողվածագիրը»։

Հարց է ծագում. ի՞նչ իրավունքով և ի՞նչ նպատակով է դուրս թողնվել հողվածի այդ սկիզբը, նույնիսկ առանց որևէ հղման, առանց բազմակետեր գնելու ԶԼ՝ որ Թումանյանը լավ գիտեր ինչից սկսել և ինչպես սկսել։ Ներկա դեպքում սույն ժողովածուն կազմողները (կամ հրատարակիչները), եթե չասենք կեղծիւ, ապա աղավաղել են հայ պոեզիայի կլասիկին պատկանող մի կարևոր վավերագիրը։

և որը կապացավ Թիֆլիսի ժողովարանի դահլիճում, 1913 թ. ապրիլի 5-ին, ի տարբերություն բարեգործական նպատակներով սովորաբար կազմակերպվող համերգների, որոնց տոմսերը նախապես ուղարկվում էին ունևոր և աստիճանավոր մարդկանց, Սայաթ-Նովայի երեկոն կազմակերպվել էր դեմոկրատական հիմունքներով. «Ոչ մի տոմսակ չուղարկել և չստորագրել մեծ մարդու անունը, այլ թողնել յուրաքանչյուր անձի ազատ կամքին՝ ազատ արտահայտել իր զգացմունքը՝ իր ուզած ձևով»:

Այդ խոշոր միջոցառման իր գործոն մասնակցությունը բերեց նաև Բաշինջաղյանը: Նա ստանձնել էր դահլիճն արևելյան ոճով գեղարվեստորեն ձևավորելու պարտականությունը և երեկույթի նախօրեին հանդես գալով մամուլում մասսայականացնում է այդ միջոցառումը, մատնանշում նրա նշանակությունը, իր համոզմունքը հայտնում, որ «հասարակությունը, որքան էլ անտարբեր լինի ուրիշ հարցերում, այս բացառիկ դեպքում կատարյալ արձագանք կտա և իր ներկայությամբ կպատվե մեր պարծանք Սայաթ-Նովայի հիշատակը»³:

Եվ իրոք, երեկույթի հաջողությունը հսկայական էր: Այն ոչ միայն նյութական շոշափելի արդյունքներ տվեց, այլև բարոյական ահագին նվաճում հանդիսացավ: Շատերն իրենց պատվի գործն էին համարում ներկա լինել այդ երեկույթին: Հատկապես մեծ էր երիտասարդության հետաքրքրությունը: Նա առաջին անգամ իմացավ, թե ինչ գոհարներ է պարունակում Սայաթ-Նովայի մինչև այդ իրեն անհայտ պոեզիան: Ըստ որում հետաքրքրությունն այնքան մեծ էր, որ հարկ եղավ երեկույթը կրկնել:

Սայաթ-Նովային նվիրված համերգների և երեկույթների կազմակերպումն այն ժամանակ որքան անհրաժեշտ, նույնքան և դժվարին գործ էր: Մեծ բանաստեղծի և նրա գրական ժառանգության նկատմամբ լայն խավերի մեջ առաջացած հետաքրքրությունը խնդիր էր դնում հանձնախմբի առջև ոչ միայն մեծ թվով, այլև հետաքրքրական միջոցառումներ կազմակերպելու, երեկույթների ծրագրերի կազմումը, բանաստեղծի երգերի լավագույն կատարողների հայտնաբերումն ու հրավիրումը, համապատասխան շենք գտնելը, ռեկլամելը, տոմսերի վաճառքի ապահովումը և այլ կազմակերպական աշխատանքներ մեծ կամք, շատ ժամանակ և եռանդ էին պահանջում: Այդ ամենին ավելանում էին նաև ցարական գրաքննության հարուցած արգելքները: Առհասարակ հասարակական բոլոր տեսակի հավաքույթներն արգելակող ցարական իշխանությունը խոչընդոտում էր Անդրկովկասի երեք ժողովուրդների ներկայացուցիչների համատեղ հավաքույթները և ելույթներն, առավել ևս, երբ դրանք նվիրված էին սոցիալական բողոքի մոտիվներով հարուստ Սայաթ-Նովայի ստեղծագործությանը:

³ «Մշակ», 1913 թ., № 71:

⁴ Այդ երեկույթի ծրագիրն, ինքնըստինքյան, հետաքրքրական է: Արևելյան ոճով զարդարված դահլիճում հանդես եկողները կրում էին հին Թիֆլիսի տարազ: Աշուղ Հազիրի խումբը կատարում էր բացառապես Սայաթ-Նովայի երգերից: Լեփ լեցուն դահլիճում կային շատ օտարականներ: Երեկույթը նվազով բացելուց հետո հանդես եկավ Հովհ. Թումանյանը, «կարճառոտ խոսքով քնորոշելով Սայաթ-Նովայի քնարը», նա արտասանեց նրա մինչ այդ անհայտ ոտանավորը: Ապա «Սայաթ-Նովայից» կտորներ արտասանեցին դարձյալ պ. պ. Գ. Բաշինջաղյան, Ն. Հարո, Ն. Աղբալյան և Ա. Քալանթար: Վերջում դարձյալ տեղի ունեցավ աշուղական մրցություն Հազիրի և Գիգոյի միջև, որի ժամանակ Հազիրը ...ստացավ հաղթողի շունչուրը, նաև Բաղդադի Թալիհնակ, որը մատուցեց պ. Թումանյանը՝ համբուրվելով մրցողների հետ» (սեֆ «Հորիզոն», 1913 թ., № 115):

Սայաթնովյան հանձնախմբի, հավասարապես նաև կատարողական ուժերի եռանդուն ջանքերի շնորհիվ հաղթահարվում էին նման դժվարությունները և մեծ բանաստեղծի պրոպագանդման գործը աննախագեղ ծավալ էր ստանում ամբողջ Անդրկովկասում: Դա ոչ թե հուշարձանի բացման առթիվ կազմակերպվող մի սովորական արարողություն էր, սոսկ մի կուլտուրական միջոցառում, այլ հայ, վրացի, ադրբեջանցի ժողովուրդների բարեկամության համընդհանուր տոնախմբություն, որը տեղեց շուրջ երկու տարի: Նշելով այդ շի կարելի հատկապես չնշտել արևելյան երաժշտության այնպիսի լավագույն վարպետների մասնակցության նշանակությունը այդ գործում, որպիսիք էին Բալա Մելիքյանը, Հազիրին և մանավանդ Սաշա Օգանեզաշվիլին (Ալ. Հովհաննիսյան), որը մեծ գեղագետի և իսկական արտիստի իր տաղանդն այդ օրերին ամբողջապես ի սպաս էր դրել Սայաթ-Նովայի պրոպագանդմանը և որն իրավամբ արժանացել էր Հովհաննես Թումանյանի ջերմ գնահատությանը: Նրանց և այլոց մասնակցությամբ տեղի ունեցող սայաթնովյան միջոցառումները լավագույն ձևով էին ժողովրդականացնում մեծ բանաստեղծի ստեղծագործությունը:

Այդ օրերին Բաշինջաղյանը, առհասարակ իր շափազանց համեստ և նույնիսկ ամոթիաժ բնավորության հակառակ, ձգտում էր Սայաթ-Նովային նվիրված միջոցառումներին մասնակցել անհրաժեշտ ամեն ինչով: Խոսքը միայն երկույթների ընթացքում մեծ բանաստեղծի երգերի հայերեն կամ վրացերեն արտասանություններով հանդես գալու մասին չէ, որ նա կատարում էր ինքնաբուխ սիրով: Նա մշտապես անում էր ամեն մի «սև աշխատանք» և պարբերաբար մասնակցում էր հայ գրողների ընկերության բոլոր այն նիստերին, որ նվիրված էին Սայաթ-Նովայի հիշատակին, ըստ որում Հովհ. Թումանյանի հրավերով երբեմն նախագահում էր այդ նիստերին, անհրաժեշտության դեպքում բացատրություններ տալիս:

Ինչքան էլ կարևոր լինի այդօրինակ գործունեությունը, այսուամենայնիվ, նկարչի ուղադրության հիմնական առարկան այդ ժամանակ կառուցվող հուշարձանն էր: Համարյա ամեն օր նա լինում էր արհեստանոցում, հետևում աշխատանքի ընթացքին, խորհուրդներ տալիս քանդակագործներին: «Բաշինջաղյանի նկարներով ու անմիջական հսկողության ներքո» հուշարձանի պատրաստման ընթացքը պարբերաբար լուսաբանվում էր մամուլում⁵:

Սայաթ-Նովայի հուշարձանի բացումը տեղի ունեցավ 1914 թ. մայիսի 15-ին: Դա մի պայծառ օր էր: Թիֆլիսի ս. Գևորգ եկեղեցու բակում (ալյուրավաճառների հրապարակ), այնտեղ, որտեղ 1795 թ. սպանվել ու թաղվել էր մեծ բանաստեղծը, հազարավոր մարդիկ էին հավաքվել: Մի քանի օր առաջ մամուլում և բանավոր կերպով հայտարարվել էր, որ հուշարձանի բացմանը ներկա գտնվելու ամեն մի ցանկացող մեծ բանաստեղծի գերեզմանին ղենելու համար կարող է ձրիաբար վարդ ստանալ բժիշկ Պանո Մանդենովի և բժշկապետ Բազրատ Նավասարդյանի այգուց: Եվ շատ շատերի, իհարկե առաջին հերթին հանձնախմբի անդամների կուրծքը զարդարված էր Սայաթ-Նովայի սիրած մայիսյան անուշաբույր վարդերով:

Այդ օրն էլ «Մշակում» լույս տեսավ Բաշինջաղյանի հոդվածը՝ «Մահար-

5 Տե՛ս «Հորիզոն», 1913 թ., № 62:

6 Տե՛ս նույն տեղում, № 212:

ձանի բացումը» վերնագրով⁷։ Այդտեղ նա հատկապես մատնանշում է, թե ինչ միջոցներով հնարավոր եղավ կանգնեցնել մարմարյա հուշարձանը, ում աշխատանքային կոպեկներից է գումարվել դրամը։ «Այս խաչքարը,— գրում է նա,— կառուցվեց մի տարօրինակ, անսովոր եղանակով։ Այս տեսակ ինքնահոծար ու սրտաշարժ զոհաբերություն երբեք տեղի չէ ունեցել մեր հասարակության ու ժողովրդի կյանքի մեջ, սակայն ականատես եղանք ներկա դեպքում։

Կույր ու հաշմանդամ ջահել աշուղները, ցնցոտիների մեջ մի կերպ փաթաթված, որոնք ձմեռվա ցրտերին թափառում են քաղաքի բոլոր փողոցները, իրանց սազի ու երգի միջոցով հացի փող ճարելու համար և որոնք սազի լարերին զարկելուց առաջ սառած ու թմրած մատները բերանի գոլորշիով են տաքացնում, և վերջապես որոնք օրը անհաջող մթնեցնելուց հետո քաղցած և ուժասպառ իրանց գետնափոր բնակարանն են վերադառնում, միակ հույսը դրած ծանոթ փոռնու վրա, որը երբեմն ապառիկ հաց է տալիս, ահա այդ խորթ զավակները կանգնեցրին վերոհիշյալ խաչքարը։

Նրանք էին, որ իրանց ունեցած-չունեցած կոպեկները անկեղծ սրտով շտապեցին խառնել այն գանձանակի հետ, որ ժողովվում էր մահարձանի համար։ Ե՛րբ և ո՛վ է արել այդ տեսակ մեծ զոհաբերություն։

Նրանց ոգևորությունն էր գլխավոր պատճառը, որ ստեղծվեց ժողովրդի մեջ ցանկալի տրամադրություն և մեկի բարոյական, մյուսի նյութական աջակցության շնորհիվ այսօր կանդնած է մեծ մարդու հին գերեզմանի վրա վայելուչ խաչքարը»⁸։

Սայաթ-Նովայի հուշարձանի բացումը վերածվեց Անդրկովկասի երեք ժողովուրդների բարեկամության տոնի։ Այդ հնարավոր եղավ աշխատավորությանը վրա հենվող մի խումբ առաջավոր գործիչների ջանքերի շնորհիվ։ Մեծ բանաստեղծի կիսամոռացված գերեզմանին դրվեց համեստ, բայց հասարակական իմաստով նշանակալից մի հուշարձան։

Սայաթ-Նովայի գերեզմանին կանգնեցված հուշարձանով շավարտվեց այն խնդրի կատարումը, որն իր նպատակն էր դարձրել Բաշինջադյանը, ձգտելով հավերժացնել մեծ բանաստեղծի հիշատակը։ Նրա ստեղծագործության պրոպագանդան, նրա ժառանգության ուսումնասիրությունը, նրա երգերի հրատարակումը շարունակում էին մնալ նկարչի ուղադրության կենտրոնում։ Հատկանշական է, որ հուշարձանի բացման առթիվ Բաշինջադյանը հրապարակում է Սայաթ-Նովայի մի վրացերեն գրած բանաստեղծությունը, որը հայտնի չէր ինչպես վրաց, այնպես էլ հայ հասարակության լայն խավերին, և ինքն էլ տալիս է նրա տեքստի տողացի թարգմանությունը⁹։

Սայաթ-Նովայի վրացերեն գրած բոլոր երգերի հրատարակությունը դիտելով իրրե կուլտուրական հսկայական նշանակություն ունեցող դրոժ, Բաշինջադյանը ջերմորեն պաշտպանեց վրաց բանաստեղծ Ի. Գրիշաշվիլու նախաձեռնությունը և այդ ուղղությամբ նրա արդեն ձեռնարկած քայլերը։ Այդ դժվարին խնդրի իրագործման համար, տվյալ տարիներին, պայմանները չափազանց աննպաստ էին։ Բայց երիտասարդ բանաստեղծը, ուր համակված էր իր սիրած երգչի վրացերեն երգերը հրատարակելու ցանկությամբ, չնահանջեց առաջա-

⁷ «Մշակ», 1914 թ., մայիսի 15։

⁸ Նույն տեղում։

⁹ Տե՛ս «Տարազ», 1914 թ., № 5, էջ 92։

ցած դժվարությունների առջև, նա արժանացավ Թումանյանի և Բաշինջաղյանի աջակցությանը, նրանց հետ միասին քննարկում էր վրացերեն երգերի ընթերցման հետ կապված առանձին հարցեր, խորհուրդներ հարցնում: Հիանալի տիրապետելով վրացերենին, Բաշինջաղյանը մեծ սիրով ու հաճույքով էր օգնում Գրիշաշվիլուն: Վրաց բանաստեղծը սքանչելի էր ընթերցում Սայաթ-Նովայի վրացերեն բանաստեղծությունները և իր հերթին երբեք չէր մերժում նկարչի թախանձաճքները՝ բարձրաձայն կուրդալ մեծ բանաստեղծի երգերը: Նկարչի հետ իր այդ համագործակցության մասին հատուկ նշել է նաև ինքը՝ Գրիշաշվիլին՝ Սայաթ-Նովայի երգերի վրացերեն ժողովածուի (1918 թ.) առաջաբանում:

Գրիշաշվիլու հրատարակած ժողովածուի առթիվ հանդես գալով մամուլում, Բաշինջաղյանն իր ընդարձակ հոդվածում («Սայաթ-Նովայի վրացերեն խաղերը»), ոչ միայն հանդամանորեն գնահատեց ժողովածուն, այլև մատնանշեց, թե ինչ արտակարգ դժվարին պայմաններում էր աշխատում վրաց բանաստեղծը, ինչ խանդավառություն էր հանդես բերում: Նա Սայաթ-Նովայի վրացերեն երգերը հրատարակելու «միտքը,—գրում է Բաշինջաղյանը,—հղացավ 1914 թ., պատերազմը սկսելուց ճիշտ երկու ամիս առաջ, երբ Թիֆլիսում ս. Գևորգ եկեղեցու գավթում տեղի ունեցավ հուշակալոր բանաստեղծ-աշուղի մահարձանի բացումը: Այն օրից պ. Գրիշաշվիլին առանձին տոկունությամբ հետամուտ եղավ հիշյալ բանաստեղծի հեղինակած խաղերին՝ դիմելով թե՛ մասնավոր անձանց և թե՛ զանազան հիմնարկություններին ու գրադարաններին: Այդ բանը ինձ քաջ հայտնի է, որովհետև նա սկզբում ինձ դիմեց խնդիրքով, որպեսզի աջակցեմ իրան այս դժվար գործում: Ասում եմ դժվար, որովհետև դժբախտաբար Սայաթ-Նովայի վրացերեն ոչ մի ձեռագիր չի մնացել... Աշխատասիրող-հրատարակիչը լինելով չքավոր դասակարգից, պարտքերի մեջ է խրվել հայազգի Սայաթ-Նովայի կորած, կիսատ-պռատ վրացերեն խաղերը հավաքելու, մշակելու ու հրատարակելու համար... Ես իբրև կենդանի վկա հայտնում եմ, որ երիտասարդ-իդեալիստ բանաստեղծը խարսխված թաղում, մի փոքրիկ սենյակի մեջ, որ ձմեռվա սառնամանիքին անգամ չէր տաքանում (վառելիք չկար), սառած մատների ծայրերը մերթ բերանին մոտեցնելով, մերթ թանաքամանին՝ տանում էր առուջ սկսած գործը: Ո՛վ է լսել նրանից մի տրուտունջ, մի մուննաթ»¹⁰:

Այդ նույն հոդվածում Բաշինջաղյանը բարձրացնում է Սայաթ-Նովայի գրական ժառանգության մի այլ կարևոր մասի՝ ադրբեջաներեն երգերի հրատարակության հարցը: Նա գրում է. «Հայ գրողների ընկերության պարտքն է ձեռնամուխ լինել Սայաթ-Նովայի թուրքերեն խաղերը նույնպես լույս աշխարհ հանելու: Մեծ հեղինակի 114 հատ բանաստեղծական երկը պետք է համարել անգին գանձ, և այս գանձը մինչև օրս մեր անփութության շնորհիվ մնացել է մոռացության մեջ... Ինչպե՞ս չգիտենք ժամանակին գնահատել ինչ որ արժանի է: Հիշյալ թուրքերեն, այսինքն Ադրբեջանի լեզվով, խաղերը գրված են հեղինակի սեփական ձեռքով, հայերեն տառերով, այն էլ շատ պարզ ու որոշ: Իմ կարծիքով Հայ գրողների ընկերությունը ուղղակի պարտավոր է հրատարակել առանձին գրքույկով այդ խաղերը թե՛ հայերեն և թե՛ թուրքերեն տառերով»¹¹:

¹⁰ «Մշակ», 1920 թ., № 57:

¹¹ Նույն տեղում:

Մեծ բանաստեղծի ժառանգությունները կորստից փրկելու և հրատարակելու խնդրով մտահոգված նկարիչը մատնանշում է այն մարդկանց, որոնք կարող են օգնել դրանում, երկյուղով շտապեցնում՝ թե քանի զնա գործը կդժվարանա. մինչև անգամ ավելացնում. «Եթե տպագրելը այժմ դժվար է, այդ իհարկև ոչինչ, անհրաժեշտ է գլխավորապես նյութը մշակել, պատրաստել: Ցանկալի կլինի օր առաջ դուրս բերել այս խնդիրը, իսկ անուհետև ձեռագիր տեսրակը պահել համապատասխան հիմնարկության մեջ, ինչպես հազվագյուտ գրական գանձ»:

Բայց անցնում էին տարիները, իսկ Սայաթ-Նովայի ադրբեջաներեն բանաստեղծությունների հրատարակման գործը տեղից չէր շարժվում: Իսկ, բնականաբար, հուզում էր Բաշինջաղյանին: Նա փորձեր է անում խնդրույթնաբար ծանոթանալ բանաստեղծի ադրբեջաներեն երգերին, լինում է սլարսկերեն, արաբերեն և հայերեն իմացող Իգիթ-բեկ Ախունդով անունով մի ծերունու մոտ, նրա օգնությամբ սլարսկում Սայաթ-Նովայի գործածած անհասկանալի բառերը, նրա աջակցությունը խնդրում՝ բանաստեղծի թուրքերեն երգերի հրատարակության գործում (մուսուլման ծերունին սիրով իր համաձայնությունն էր տվել): Այլևլին. Բաշինջաղյանը դտավ Մարգարյան անունով մեկին, որը «հանձն էր առնում իր սեփական հաշվով լույս ընծայել այդ խաղերը»:

Թեև այս բոլոր ջանքերն արդյունք չտվեցին, նկարիչը հետադաշում եւ, արդեն ծերացած շարունակում էր արծարծել այդ կարևոր խնդիրը: Մահից բնդամենը մեկ տարի առաջ՝ 1924 թ. նա հանդես եկավ «Սայաթ-Նովայի թուրքերեն բանաստեղծությունները» հոդվածով: Այստեղ Բաշինջաղյանը հասարակության ուշադրությունը հրավիրում է «Սայաթ-Նովայի ինքնաձեռագիր խաղի դավրարի» վրա, «որը համարյա 200 տարվա հնություն ունի»: «Մոտ 70 տարի սրանից առաջ,—գրում է նկարիչը,—բժիշկ Դևորգ Ախվերդյանը ըմբռնելով բանաստեղծի մեծությունը, հրատարակել է այդ դավթարի մեջ եղած բոլոր հայերեն բանաստեղծությունները, որոնց թիվը հասնում է 46-ի: Սակայն դավթարը սլարսկանում է իր մեջ նաև 115 հատ թուրքերեն լեզվով դրած բանաստեղծություններ: Նպատակս է հենց այդ հեղինակությունների մասին խոսել: Ինչո՞ւ մինչև օրս ուշադրություն չեն դարձրել այն մարմինները, որոնք իրար ետևից եկել անհետացել են և որոնց սլարսկանությունն էր լույս ընծայել այդ գրական երկերը»¹²:

Այնուհետև Բաշինջաղյանը բանասիրական նկատողություններ է անում Սայաթ-Նովա բանաստեղծի մասին, շեշտում երեք լեզուների նրա իմացությունն ու հավասար հաջողությամբ ստեղծագործելը, «որ ոչ թե հազվագյուտ է, այլ եզակի... ինչպես կովկասյան իրականության մեջ, այնպես էլ համաշխարհային գրականության մեջ»: «Սայաթ-Նովան եղել է ընդարձակ հայացքներով ու լայն սրտով մեծ մարդ»: «Սիրո ու ճշմարտության գաղափարների» մեծ երգչի կյանքն ու անձնավորությունն անկեղծաբան են, իսկ դրանք «ուսումնասիրելու համար մենք շունենք ոչ մի նյութ, բացի իր ձեռագիր խաղի դավթարից», որի հրատարակությունը շատ բան կսլարսկի: Բայց ոչ միայն այդ. Սայաթ-Նովայի դավթարի հրատարակությամբ,— ընդդիմում է Բաշինջաղյանը,— «արդեն աչքարա կդառնա կովկասյան երեք գլխավոր ազգությունների համար, որ դեռ XVIII դարում դոյություն է ունեցել մի մարդ, որ բացի հանճարեղ բանաստեղծ

¹² «Մարտակոչ», Թիֆլիս, 1924 թ., № 181:

լինելուց, նաև օժտված է եղել համամարդկային գաղափարներով և այդ գաղափարները նա անձամբ տարածել է երգի ու նվագարանի միջոցով: Մի խոսքով նա կամուրջ է կառուցել ժողովուրդների իրար մերձանալու համար»¹³:

Հետաքրքրական իր այս հոգվածի հետ միաժամանակ, հենց «Մարտակոչի» նույն համարում Բաշինջաղյանը հրապարակեց Սայաթ-Նովայի մի նորահայտ բանաստեղծությունը, որը հայտնաբերել և նրան էր տրամադրել Ս. Օգանեզաշվիլին, և որը փոխադարձ հարգանք էր տաժում նկարչի նկատմամբ: Իր մեկնաբանություններում Բաշինջաղյանը նկատել է, որ հրապարակվող բանաստեղծությունը Սայաթ-Նովայինն է, բայց հայտնաբերված ձեռագրում չկա առնվազն մեկ սկզբնատող, և որ երգը ժամանակի ընթացքում աղավաղվել է: Նկատենք նաև, որ սովետական սայաթնովագետները նշելով, որ հիշատակվող բանաստեղծության հրապարակման առաջնությունը Բաշինջաղյանինն է, թեև որոշ վերապահումներով համաձայնվում են նրա դրույթների հետ¹⁴:

Որքան կուրախանար Բաշինջաղյանը, եթե նրան վիճակված լիներ ապրել մինչև մեր օրերը, երբ սայաթնովագիտությունն հասել է այնքան մեծ հաջողությունների, որ դեռ 1945 թ.՝ հանճարեղ բանաստեղծի մահվան 150-ամյակի առթիվ լույս են տեսել Սայաթ-Նովայի հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն երգերի ժողովածուն՝ հայերեն և ռուսերեն լեզուներով:

* * *

Սայաթ-Նովայի հայերեն երգերի ձեռագրի ճակատագիրը ևս որոշակիորեն կապված է Բաշինջաղյանի անվան հետ: Մեծ բանաստեղծի հիշատակի հավերժացման ուղղությամբ նրա ձեռնարկած եռանդուն գործունեությունից հետո, Սայաթ-Նովայի կյանքն ու գործն ուսումնասիրողներից շատերը դիմում էին նրան: Բաշինջաղյանին դիմողների թվում էր նաև Սայաթ-Նովայի թոռը՝ Բագրատ Սայաթ-Նովան, որի մոտ գտնվում էր պապի հայերեն երգերի ձեռագիրը («Դավթար»): Բագրատը՝ արդեն ծերության հասած գտնվում էր նյութական անապահով վիճակում և մենշևիկների տիրապետության տակ գտնվող Վրաստանում ոչ ոք հոգ չէր տանում նրա մասին: Թանկարժեք ձեռագիրը հանձնելով Բաշինջաղյանին Բագրատ Սայաթ-Նովան, ինչպես նա է արտահայտվել, կարող էր լիովին վստահ լինել, որ այն հոգատար ձեռքում կգտնվի, որ նրա ճակատագրի համար կարող է վստահ լինել: Միաժամանակ նա հույս ուներ ստանալ որոշ գումար, որի կարիքը խստորեն զգում էր:

Բաշինջաղյանն անսահման ուրախությամբ ընդունեց Սայաթ-Նովայի ձեռագիրը: Այն կազմակերպությունը, որը կարող էր ձեռք բերել և Սայաթ-Նովայի ձեռագրի արժանավոր տերը դառնալ հայ գրողների ընկերությունն էր՝ Հովհ. Թումանյանի նախագահությամբ: Բաշինջաղյանն Սայաթ-Նովայի ձեռագիրը հանձնեց այդ ընկերությանը, որը պետք է Բագրատ Սայաթ-Նովայից գներ: Ձեռագիրը երկար ժամանակ մնաց Թումանյանի մոտ և երբ Հայաստանում սովետական կարգեր հաստատվեցին այն հանձնվեց Լուսժողկոմատին և այժմ, իբրև մի թանկագին նշխարք, պահպանվում է ՀՍՄԻ ԳԱ գրականության և արվեստի թանգարանում, որով և ժողովրդի սեփականությունն է դարձել: Այդպես

¹³ Նույն տեղում:

¹⁴ Տե՛ս «Սայաթ-Նովա», ժողովածու, 1945, էջ 147, 171—172:

Բաշինջաղյանն էլ իր մասնակցությունն ունեցավ Սայաթ-Նովայի ձևագիրն անխուսափելի կորստից փրկելուն:

Սայաթ-Նովայի ստեղծագործության ժողովրդականացման իր գործունեությունը Բաշինջաղյանը շարունակել է նաև սովետական տարիներին: Գրականությունը և արվեստի թանգարանում պահպանվում է «Տ հոկտեմբերի 1922» թվակիր մի փաստաթուղթ: Դա մեծ բանաստեղծին նվիրված Թիֆլիսի պետական կոնսերվատորիայում կայացած երեկույթի ծրագիրն է: Նրա վրա մատնադրված է. «Պատասխանատու տնօրեն նկարիչ Գ. Բաշինջաղյան»: Ուշագրավ է այդ ծրագրի բազմազանությունն ու մասնակիցների ինտերնացիոնալ բնույթը: Նրանում մասնակցում էին հայ, ադրբեջանցի և վրացի դերասաններ, արտասանությունը հանդես է եկել բանաստեղծ Ի. Գրիշաշվիլին, երաժիշտների թվում էր Սաշա Օգանեզաշվիլին, երգիչների մեջ էր Բ. Ամիրջանովը, ակնաւորը կատարող-Թառիստ, նախկին քաղաութանակիր Ներսես Կորգանովը, որը վարում էր համերգը: Այդ երեկոյի ընթացքում կատարվեցին Սայաթ-Նովայի «Ինչ կոնիմ», «Ամեն սագի», «Զիս ասում», «Դելի յաման», «Ուստի գուկաս», «Սա մի ղարիբ րուլրուլի պես», «Ականջ արա» («Դամեսխանի») և այլ երգեր:

Այդպիսի երեկույթներ 1921—1925 թթ. հաճախ էին կազմակերպվում: Ըստ որում դրանք սկսվում էին բացման հակիրճ խոսքով, որը սովորաբար Բաշինջաղյանն ինքն էր կազմում, բայց հրապարակումը հանձնարարում էր ընտանիքի անդամներից որևէ մեկին: Մեծ մասսայականություն վայելող և Սայաթ-Նովայի լայն ժողովրդականությունը նպաստող այդպիսի երեկույթներ կազմակերպելիս Բաշինջաղյանը ձգտում էր միաժամանակ պահպանել աշուղներին հրապարակային մրցություն հին ավանդը:

Ավելին. նա ընդհանրապես լուրջ հետաքրքրություն էր հանդես բերում դեպի աշուղական այդպիսի մրցությունները, որովհետև դրանք դրսևորում էին աշուղական արվեստի տաղանդի լավագույն նմուշները, դրանց ժամանակ հանդես էր գալիս աշուղների սրամտությունը, հումորը, հարց ու պատասխանները երևան էին հանում ժամանակաշրջանի մտայնությունը: Պահպանվել է երկու աշուղների մրցակցության մի ոտանավոր տեքստ, որը զրի է առել Բաշինջաղյանը:

Առհասարակ հարկ է նշել, որ Բաշինջաղյանը ջերմ ու մտերիմ կապեր էր պահպանում իր ժամանակի լավագույն աշուղների և արևելյան երաժիշտների Ջիվանու, Սկանդար-Նովայի, Հազիրի, Գրիգոր Տալյանի, Ներսես Կորգանովի, Սաշա Օգանեզաշվիլու, Բալա Մելիքյանի, Կարոյի և շատ ուրիշների հետ: Նրանք էլ իրենց հերթին հարգում և սիրում էին նկարչին՝ իբրև հայ և ընդհանրապես արևելյան ժողովրդական երաժշտությունը սիրողի ու գնահատողի, մասնավորապես Սայաթ-Նովայի ջերմ երկրպագուի: Հանձին Բաշինջաղյանի ժամանակակից շատ աշուղներ տեսնում էին իրենց հնարավոր ամեն ինչով խրախուսողին, աջակցողին: Թերևս ավելորդ չէ մի այսպիսի օրինակ. ցարական ռեժիմի պայմաններում, երբ մահացողների նկատմամբ հոգ տանող որևէ կազմակերպություն չկար, հայտնի աշուղ Հազիրը, թեև ուներ իր հատուկ խումբը, չկարողացավ իրենից հետո թողնել այնքան միջոցներ, որ կարելի լիներ դրանցով կազմակերպել իր թաղումը: Իմանալով այդ մասին և մեծ հարգանք ունենալով ճանաչված աշուղ-երաժիշտի նկատմամբ, հումանիստ-նկարիչն անմիջապես իր վրա ստանձնեց Հազիրին արժանվույն ձևով հողին հանձնելու գործը և

այդ բանում ներգրավելով մի շարք ընկերությունների ու մամուլին, ապահովեց աշուղի պատշաճ հուղարկավորումը:

Ժողովրդական երգիչների և առհասարակ աշուղական գրականության, մասնավորապես Սայաթ-Նովայի ստեղծագործության նկատմամբ նկարչի այդ հոգատար վերաբերմունքը նկատի ունենալով՝ պատմաբան-գրող Լևոն, երբ նրա մահից հետո գրում էր. «Ես չեմ ճանաչում մի ուրիշին, որ նրա չափ կտորներ բերան արած լինեի հայ, վրացի, ռուս բանաստեղծներից: Բայց նրա համար ոգևորության անսպառ աղբյուր էր մասնավորապես ժողովրդական բանաստեղծությունը:

Անձնական մոտիկ բարեկամություն ունենալով ժողովրդական այն երգիչների հետ, որոնք երգում էին Թիֆլիսի տրախտիկներում: Այսպես՝ աշուղ Հագիրին նա սիրում էր ու հարգում այն աստիճան, որ նրա համար հորեկյան սարքեց, հողվածներ դրեց լրագրերում, իսկ երբ Հագիրին ծանր հիվանդացավ, Գևորգը նրա համար օգնություն էր խնդրում հայ գրողների ընկերությունից և այլ աղբյուրներից: Նա էր, որ երբ Հագիրին մեռավ, վազեց այս ու այն կողմը, դիմումներ արեց՝ իր բարեկամի դիակը փոքրիշատե վայելուչ կերպով հողին հանձնելու համար»¹⁵:

Ինչ խոսք, որ բանը սոսկ անձնական փոխհարաբերությունները չէին, այլ այն ծառայությունը, որ երգիչը բերել էր աշուղական արվեստի զարգացման, ժողովրդական պոեզիայի մարգարիտների պահպանության գործում: Զե որ այն ժամանակ ռադիոյանց չկար, բացառվում էր ձայնասկավառակների վրտ աշուղական երգերի գրանցումը և աշուղների մահանալու հետ միասին գրեթե կորչում էր նաև նրանց հավաքած երգային հարստությունը: Միակ բանը, որ կարելի էր անել՝ զա աշուղներին հոգատարությունը շրջապատելն էր, նրանց հարկավորը հատուցելը, հարկել նրանց հիշատակը: Եվ այստեղ ևս գրսևորվում էր նկարչի հումանիզմը:

Այդ շնորհակալ ոգով է տոգորված նաև Բաշինջաղյանի «Ժողովրդական հայտնի երգիչ» վերնագրով մահախոսականը Սկանդար-Նովային (Գևորգ Սկանդարյան) նվիրված: Այդտեղ նա բարձր է գնահատում «Ժողովրդական բանաստեղծի» ծառայությունը, մասնավորապես «մեծ շարչարանքով, դանադան, արդեն մոռացված, երգիչների վրաց լեզվով ասած խաղերը» հավաքելու, խումբադրելու և իր իսկ առաջաբանով հրատարակելու գործում: Մատնանշելով, որ Սկանդար-Նովայի «Վարդարան» վերնագրով հայերեն գրած երկերի հաստատեությունը նյութական պատճառներով մնացել է չհրատարակված և ուշադրություն հրավիրելով դրա վրա, Բաշինջաղյանը հատկապես ընդգծում է հայ գրողների և մտավորականների հետ նրա ունեցած սերտ կապը:

«Այդ ժողովրդական երգիչը, — գրում է Բաշինջաղյանը, — սիրված ու գնահատված էր Գաբրիել Սունդուկյանից, Րիա Ճավճավաձեից, Ակակի Սերեթելիից և այլն: Հանգուցյալ Սունդուկյանը ժամերով նստում գրուցում էր նրա հետ, գլխավորապես Սայաթ-Նովայի շուրջ...»¹⁶:

Այսօր, երբ հայ ժողովուրդը, համայն աշխարհի մարդկությունը տոնում է հանճարեղ բանաստեղծի ու մտածողի հորեկյանը, թվում է, հարկ է հատուկ

¹⁵ Լ և ո, «Սայաթ-Նովայի հարցը», «Խորհրդային Հայաստան», 1926 թ., № 2 (1353):

¹⁶ «Մշակ», 1917 թ., № 74:

ընդգծել առհասարակ նրա ավանդների հետ սերտորեն առնչվող աշուղական պոեզիայի, ժողովրդական այդ բանաստեղծների ժառանգությունն ուսումնասիրելու անհրաժեշտության ու կարևորության մասին: Բաշինջադյանն իր պարտքն էր համարում հասարակության ուշադրությունը հրավիրել աշուղական արվեստի այս կամ այն շափով նշանավոր ներկայացուցչի վրա, հատկապես այն դեպքում, երբ նրանց մոռացության ու անհայտության վտանգն էր սպառնում, երբ նրանք թեկուզ փոքր ինչ շափով կապվում էին Սայաթ-Նովայի ստեղծագործության, նրա ավանդների հետ:

Այս տեսակետից բավական ուշագրավ է Բաշինջադյանի մի ուսումնասիրությունը՝ «Վրաց հայազգի բանաստեղծները»: Ավելի քան կես դար առաջ հրապարակված լինելով, այդ ուսումնասիրությունն այսօր էլ չի կորցրել իր արժեքը թե՛ իբրև սկզբնաղբյուր, թե՛ պարունակած հետաքրքրական հարցադրումներով: Ինչ թող մեզ ներվի, որ փոքր ինչ ավելի ընդարձակ մեջբերում ենք կատարել այդ մոռացված հոդվածից.

«Մոտ հարյուրհիսուն տարի առաջ, երևելի աշուղ-բանաստեղծ Սայաթ-Նովան գրել է մի շարք ոտանավորներ վրացերեն լեզվով: Նրան հետևել են Քիչիկ-Նովան, Շամշի-Մելքոն, Ղարիբ, Ալվան-Օղլան, Յուլչի-Օղլան, Նարգիլ և այլն, և այլն աշուղներ, որոնք հեղինակել են բավմաթիվ երգեր վրաց լեզվով: Սկանդար-Նովայի հրատարակած «Սալխին»-Սաղանդարի» ժողովածուն, որ տպագրված է 70-ական թվականներին, պարունակում է իր մեջ թե՛ վերոհիշյալ հեղինակների աշխատությունները և թե՛ ուրիշ բազմաթիվ երգեր, որոնց հեղինակները հայեր են եղել:

Ինքը Սկանդար-Նովան (Գևորգ Սկանդարյան), որ պատկառելի հասակով դեռ կա տառ ծերունի է, մինչև օրս չէ դադարում վրաց լեզվով երգեր գրելուց ու հրատարակելուց: Նա սիրահար է Սայաթ-Նովայի և անգիր գիտե նրա բոլոր աշխատությունները թե՛ հայերեն և թե՛ վրացերեն...

Այժմ պետք է խոսեմ մի հայ հեղինակի մասին, որ 70-ական թվականներին արտադրեց մի գեղեցիկ աշխատություն վրաց լեզվով, բայց չար բախտի և անհեռատես մարդկանց շնորհիվ կորստի մատնվեց: Հեղինակը քառորդ դար առաջ կնքեց իր մահկանացուն և ձեռագիրը անհայտացավ: Բովանդակությունը վերցված է Ս. Նունեի կյանքից և արտահայտված էր բանաստեղծորեն, ընդարձակ ոտանավորի ձևով, այբուբենի կարգով: Քերթողը մի ծերունի էր Գրիգոր Շաբուրյանց կամ, ինչպես անվանում էին, Գրիգոր Շաբուրով անունով, բնիկ սղնախեցի:

Քանի որ նա մորս կողմից ինձ ազգական էր, միևնույն ժամանակ և հարեւան, ես էի մարտնչում նրա այդ հեղինակությունը: Նա իմ գլուխս շուրջելով անվանում էր իր փոքրիկ քարտուղար և հյուրասիրում մրգերով: Նա քաջ ծանոթ էր ամբողջ վրաց գրականությանը և կատարելապես տիրապետում էր Շոթա-Ռուսթավելյան բարձր լեզվին:

Մինչև օրս անգիր գիտեմ մի քանի կտորներ այդ գրվածքից, բայց շատ և շատ ցավում եմ, որ ամբողջովին չեմ հիշում:

Այդ հեղինակությունը իր ժամանակին ուղարկված էր Թիֆլիս առանձին գրքույկով հրատարակելու համար, բայց խափանվեց ...Գրքույկը ...իմ կարծիքով, վրաց դրադարանի գոհարներից մեկը կարող էր համարվել¹⁷:

¹⁷ «Մշակ», 1912 թ., № 239,

Թե որքան մեծ դժվարությունների առաջ էր կանգնած սայաթնովագիտությունը մինչև սովետական ժամանակաշրջանում և սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին, երևում է նաև Լեոի վերը բերված հոդվածի հետևյալ տողերից:

«Երբ ձուլվեց Անդրկովկասյան ֆեդերացիան, Հայ գրողների ընկերության վարչությունը, որի նախագահը ես էի, հերթական հարց դարձրեց Սայաթ-Նովայի ամբողջացումը:

Ծրագրվում էր այսպես. դիմել ֆեդերացիայի կառավարության, միջոցներ և թույլտվություն խնդրել Սայաթ-Նովայի բոլոր երգերը (հայերեն, վրացերեն և թուրքերեն) մի հատորի մեջ հրատարակելու՝ իբրև հուշարձան երեք ժողովուրդների միություն: Մտադրություն կար կազմելու այդ առթիվ մի մասնագիտացված հմուտ անձերից, որ պիտի կատարեր խմբագրական ահագին գործ, այն է՝ արձակով թարգմանել բոլոր երգերը, այնպես, որ՝ հայը, վրացին և թուրքը կարողանան կարդալ Սայաթ-Նովայի ամբողջ գործը: Միաժամանակ պիտի կազմվեր բանաստեղծի լիակատար կենսագրականը նոր նյութերի և արդեն եղածների հիման վրա: Այս գործում մեծ աջակցություն ցույց պիտի տար մանավանդ Բաշինջաղյանը: Սակայն այս ծրագիրը չիրագործվեց: Հայ գրողների ընկերությունը շուտով լուծվեց, իր բոլոր գործերը հանձնելով Թբիլիսիի հայարտաձևը»:

* * *

Հնարավոր չէ մի հոդվածում լիովին տալ Բաշինջաղյանի եռանդուն և արդյունավետ ամբողջ գործունեությունը կապված Սայաթ-Նովայի հետ: Այն տասնյակ տարիներ է տևել և բնավ չի թուլացել:

Առանց որևէ չափազանցության կարելի է ասել, որ գեղանկարչությունից իր ազատ ժամերի մեծ մասը նա հատկացնում էր Սայաթ-Նովայի ստեղծագործության ուսումնասիրությանն ու նրա հիշատակի հավերժացման գործին: Սայաթ-Նովան նրա համար սոսկ հանճարեղ բանաստեղծ չէր, որն իր մեծությամբ համընդհանուր ճանաչման է արժանի: Գլխավորը Բաշինջաղյանի համար այն էր, որ Սայաթ-Նովան, նրա մարդասիրական գաղափարները հոգեհարազատ էին իր՝ նկարչի հոգուն: Սայաթ-Նովա անձնավորության բարձր բարոյականությունը, բանաստեղծի իր նշանակության հպարտ գիտակցումը, մարդկային իր արժանապատվության ղյաղոդությունը, տիրակալների ոտնձգություններից այն պաշտպանելու պատրաստակամությունը և դրա հետ միասին ջերմ ու զգայուն սիրտը, որ շարունակ ճշմարտություն էր որոնում, խոր և անձնվեր սիրելու ունակությունը, — բանաստեղծի այս բոլոր առաքինությունները գերում ու հնազանդեցնում էր նկարչին: Նրան հարազատ էր բանաստեղծի ստեղծագործության բուռն ինտերնացիոնալիզմն ու խորը ժողովրդայնությունը:

Ահա թե ինչու Բաշինջաղյանը «Սայաթ-Նովայի համար» ժամանակ չէր խնայում, ինչպես չէր խնայի մտերիմ, հարազատ, սիրելի մարդու համար: Միայն մահն ընդհատեց Սայաթ-Նովայի պոեզիայի ուսումնասիրության նրա ամենօրյա աշխատանքը: Ընդհատեց, այո, բայց չբաժանեց նրանց, Բաշինջաղյանն իր վերջին ցանկության համաձայն թաղված է սիրելի բանաստեղծի կողքին: Նրա հուղարկավորությանը մասնակցում էր արևելյան երաժիշտների մի

մեծ խումբ, որը զլխավորում էին Սաշա Օգոսենգաշվիլին և Ներսես Կորյանովը։ Սգո հուզումնալից խոսք ասաց Ի. Գրիշաշվիլին, իսկ օգոսենգաշվիլին կատարեց նկարչի սիրած երերից մեկը։ Սայաթնույան անմահ «Դուն էն գլխեն իմաստուն ես...» երգի մեղեդիների տակ նկարիչն իր վերջին հանգրվանը գտավ մեծ բանաստեղծի կողքին։

Այդպես, Սայաթ-Նովան մինչև վերջին պահերն ուղեկցեց Գեորգ Բաշինջաղյանին։ Այդպես, նկարիչն ապրեց իր պաշտած բանաստեղծի հետ ու վերջին հրաժեշտը նրանից առավ ու նրան տվեց։